ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
nairahambardzumyan@yahoo.com

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Բանալի բառեր՝ Կ. Պոլիս, բարեգործական միություններ, կրթություն, վարժարան, օսմանյան կայսրություն:

Ուսումնասիրության նպատակն է՝ քննել XIX դ. երկրորդ կեսին Կ. Պոլսում ձևավորված հայոց ազգային, խնամակալական-հումանիտար ընկերությունների և վարժարանների դերակատարությունը կանանց էմանսիպացիայի գործընթացներում: Ընկերությունները դիտարկվել են ըստ գործունեության *նպատակի* (հայ կանանց և աղջիկների կրթության և դաստիարակության, օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում օրիորդաց վարժարաններ բացելու, գործող վարժարաններին հագուստով, օրապահիկով, գրենական պիտույքներով և ֆինանսական միջոցներով ապահովելը) և *գաղափարաբանական հիմքի* (մարդասիրական և ազգօգուտ գործունեություն ծավալելը): Կիրառել ենք *ֆենոմենոլոգիական* և *պատմահամեմատական* մեթոդները: Ուսումնասիրությունը կարևոր է և արդիական է ոչ միայն բարեգործական ընկերությունների և վարժարանների համակարգման, այլև՝ հայագիտության մեջ կանանց հիմնահարցերի քննության տեսանկյունից:

Ներածություն

Մինչև 19-րդ դարի 50–60-ական թվականները օսմանյան կայսրությունում հայ կանանց ոչ ակտիվ մասնակցությունը սոցիալ-քաղաքական և գրական-մշակութային կյանքին, հասարակական, կրթական և բարեգործական կազմակերպությունների գործունեությանը, պայմանավորված էր առավելապես ազգությամբ և դավանանքով, ապա՝ հայրիշխանությամբ և սոցիումի նահապետական հայացքներով, կրթության, դաստիարակության, ձայնի, իրավունքի, կին-տղամարդ իրավահավասարության բացակայությամբ, ավանդապաշտությամբ, հետևաբար և՝ սեռով: Ժամանակի մամուլը նույնպես անդրադառնում էր սույն երևույթին՝ որպես խորքային և արմատական խնդրի՝ «Մարդկային ազգի ընկերական զարգացման եւ յառաջադիմութեան սկզբնապատճառ եղող սկզբանց մէկն ալ երկու սեռի դաստիարակութիւնն ըլլալը, բոլոր քաղաքակրթեալ ազգերն անհամար փորձերով ցոյց տուած են. բնական է որ երբ ընկերութիւնը կազմող մէկ մասը միւսին պէս բարոյական եւ մտաւորական մի եւ նոյն կարողութիւնները չունենայ եւ քաղաքական բարեմասնութիւններէ զուրկ ըլլայ, անտարակոյս երկու կողմի հակառակ դրութիւնները յառաջադիմութեան արգելք կըլլան եւ պատճառ խափանման ընկերական զարգացման. բայց երբ երկու սեռը հաւասարապէս ունենան մի եւ նոյն բարոյական եւ մտաւորական կարողութիւնները, յայնժամ երկու կողմի լուսաւոր գաղափարները մէկտեղ աջակցելով՝ կրնան յաղթող հանդիսանալ այն ամեն դժուարութեանց՝ զոր տգիտութիւնը կը յարուցանէ յառաջադիմութիւնը խափանելու համար: Քանի որ ընկերութեան զարգացումը կը պահանջէ միանգամայն երկու սեռին օժանդակութիւնը, դիւրին է հասկնալ որ մեր ազգը գեղեցիկ սեռին օժանդակութեան կարօտ է, որչափ քաղաքակրթութեան կատարելութեան հասնելու փափաք

ունենայ, եւ ընկերութեան բարոյական եւ նիւթական զարգացումը խնդրէ»[63]:

Աշխարհայացքով պայմանավորված կանխատեսումները, իհարկե, էական են կանանց ազատագրության գաղափարաբո-վանդակային հիմնահարցերում, քանի որ հստակորեն տեսանելի են ազգային, սոցիալ-քաղաքական հայեցակետերը ժամանակի քաղաքական, սոցիալ-հասարակական բախումների և հասարա-կական-քաղաքական մտքի ձևավորման շրջանակներում: Հայ կի-նը, սակայն, ի տարբերություն եվրոպացի կանանց, առավել բա-րենպաստ իրավիճակում էր. տղամարդիկ աջակցում էին նրանց ամենատարբեր ձեռնարկումներում, թեպետ՝ նախնական շրջանում կանանց ազատագրման հիմնախնդիրները առավել բացասաբար էին գնահատվում տղամարդկանց կողմից, փաստարկվելով, թե հայ կնոջ պարտականությունը, պարտավորությունը և գործը պետք է լինի միայն ընտանիքը, թելը, ասեղը, իլիկը:

Ընկերություններ, որոնց նպատակը հայ կանանց և աղջիկ-ների կրթության և դաստիարակության, օսմանյան կայսրության հայաշատ քաղաքներում օրիորդաց վարժարաններ բացելու, գործող վարժարանները հագուստով, օրապահիկով, գրենական պիտույքներով և ֆինանսական միջոցներով ապահովելն էր:

19-րդ դարի 2-րդ կեսը հայկական մշակույթի ծաղկման ժամա-նակաշրջանն էր: Կապիտալիստական հարաբերությունների զար-գացումը բոլոր ժողովուրդներին ուղղորդել էր մշակութային թռիչքի և, ազատվելով ֆեոդալական կապանքներից, մտավորականությու-նը փորձում էր լուսավորել ժողովրդին, բարենորոգել և բարձրացնել ընդհանուր կրթական մակարդակը: Նրանք հավաքվում էին կա-նանց նորակազմ միություններում, քննարկում հարցեր, զբաղվում

[63] «Մասիս», 1864, Կ. Պոլիս, թիւ 636, էջ 2:

հայկական դպրոցների և վարժարանների բարենորոգչական աշխատանքներով: Բարենորոգումների հիմքը դպրոցն էր: Եկեղեցական ծխական դպրոցները այլևս չէին բավարարում ժամանակի պահանջներին: Բացվում էին նոր բարձրագույն դպրոցներ ու վարժարաններ, քանի որ հայ բուրժուազիան հիմնականում ձևավորվում էր Հայաստանից դուրս: Դրանց զուգահեռ, բարեգործական ընկերությունների օգնությամբ և մասնակցությամբ, Արևմտյան և Արևելյան Հայաստանների հայաշատ քաղաքներում, կիրթ և առաջադեմ հայուհիների ջանքերով բացվում էին *օրիորդաց* կամ *աղջկանց* վարժարաններ և դպրոցներ, ձևավորվում էին կին գրողներ, մշակութային, պետական, հասարակական և քաղաքական գործիչներ, արհեստագործներ, վարժուհիներ:

Օրիորդաց կամ *աղջկանց* վարժարանների հիմնումը ամենատարրական վախ էր ներշնչում թուրք կառավարությանը, քանի որ հայ կանանց գրագիտությունը ենթադրում էր նաև գիտակցության զարթոնք, որն էլ իր հետևից շղթայաբար բերելու էր մի շարք ներքին և արտաքին քաղաքական խնդիրների առաջացմանը, առաջին հերթին՝ ազգային-ազատագրական (կանանց հայդուկային շարժումը), ազգային փոքրամասնությունների հետ փոխհարաբերությունների վերանայման, ապա՝ կրթության, լուսավորության և աշխատանքի իրավունքների, կին-տղամարդ իրավահավասարության պայքարի գաղափարներին, որոնք որքան էլ գաղտնագրված, սակայն մի շարք վտանգներ էին ենթադրում թուրք կառավարության համար: Եվ դա իրողություն էր: 1861 թվականին Կ. Պոլսի Պեշիկթաշ թաղամասում մի խումբ հայ օրիորդներ ստեղծում են «*Հայ տիկնանց ընկերություն*»-ը, որը զբաղվում էր դպրոցների խնամակալությամբ[64]: 1863 թվականին Թորոս Նազարյանը Կ. Պոլսում հիմնում է «*Աղջկանց դաստիարակութեան նպաստամատոյց*» ընկե-

64 «Արեւելք», 1898, Կ. Պոլիս, թիւ 3854, էջ 164:

ությունը, որի կանոնադրությունը բաղկացած էր յոթ կետից՝ «Ընկերութեանս նպատակն է իւր կարողութեանը չափ աղքատիկ աղջիկներ, օրինավոր դպրոցի մէջ բարի ընթացքով դաստիարակել տալ՝ անոնց պէտք եղած ծախքը ինքն հոգալով»[65]: 1866 թվականի ապրիլին պոլսահայ տիկնանց նախաձեռնությամբ հիմնվում է «*Խնամակալ տիկնանց ընկերությունը*», որի նպատակը Սուրբ Խաչ թաղամասի օրիորդաց վարժարանի աշակերտուհիների կրթությանը նպաստելն էր՝ չնայած վարժարանի խնամակալ տիկնանց տեսչության սուղ միջոցներին: Սելամե թաղամասի խորհուրդը, գոհ մնալով «Խնամակալ տիկնանց ընկերության» հաջողված գործունեությունից, վարժարանի տեսչությունը նույնպես հանձնում է նրանց հոգածությանը՝ «Ասոնք մեծ յոյսեր կուտան թէ տիկնայք ալ լավ հասկցեր են ժամանակիս պիտոյքը, և աղջկանց դաստիարակութիւնն ոչ ևս իրենց անտարբեր է, ինչպես էր ատենօք՝ *երբ տգիտութիւնը կը կարծէր թէ կինը միայն ստրուկ վիճակի մը համար ստեղծուած է և անոր կարդալ գրել սորվիլը վնասակար է*»[66] հայտարարությամբ: Ընկերությունը գործել է մինչև 1872 թվականը: 1866 թվականի ապրիլ-մայիսին Յ. Այվազյանի, Մ. Չարեխյանի, Կ. Օտյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է «*Տիկնանց ընկերությունը*», որը համայնքի երկսեռ դպրոցի սաներին պարբերաբար ապահովել է գրենական պիտույքներով[67]: 1868 թվականի դեկտեմբերին Կ. Պոլսի Էյուպի Ս. Եղիա թաղամասի տիկնայք հիմնել են «*Հռիփսիմեան խնամակալեաց ընկերությունը*», որը ստանձնել է Պեզճեան արական վարժարանին կից աղջիկների բաժնի հոգածությու-

[65] «Զեփիւռ Հայրենեաց», 1863, թիվ 19, էջ 147: Ըստ կանոնադրության՝ ոչ մշտական անդամները ամսեկան մեկ դուրուշ էին վճարում, իսկ մշտական անդամները՝ հարյուր տասը դուրուշ, որոնք կուտակվելով ծառայում էին աղջիկների կրթության և դաստիարակության խնդիրները լուծելուն:

[66] «Մասիս», 1867, Կ. Պոլիս, թիւ 811, էջ 3:

[67] «Փունջ», 1866, Կ. Պոլիս, թիւ 124:

նը[68]: 1869 թվականին, Խասիգյուղի Ներսիսյան օրիորդաց վարժարանին ֆինանսապես աջակցելու համար, թաղամասի կանայք ստեղծել են «*Խնամակալուհի տիկնանց ընկերություն*»[69]: 1869 թվականի օգոստոսին հիմնված «*Արտեմեան Տիկնանց Ընկերությունը*» նպաստել է «*Առաքելյան*» երկսեռ վարժարանի աշակերտուհիների կրթության և առաջադիմության գործին[70]: «*Դպրոցասիրաց Սանուց Ընկերութիւնը*» և «*Արտեմեան Տիկնանց Ընկերությունը*» հաջողում են միացյալ միջոցներով նոր շենք ունենալ Ս. Աստվածածին թաղամասի Առաքելյան վարժարանի աղջիկների բաժնի համար: Կազմավորվում է «Արտեմյան» վարժարանը, որի պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունեցել 1870 թվականի ապրիլի տասնչորսին[71]: 1869 թվականի Սալմաթոմրուքի Հռիփսիմյան օրիորդաց վարժարանի աշակերտուհիները իրենց ուժերով հիմնել են «*Հռիփսիմեան Սանուհեաց ընկերություն*»-ը, որի նպատակն էր «գեղեցիկ սեռին դաստիարակութեանը նպաստել նիւթապէս եւ բարոյապէս»[72]: 1871 թվականին Կ. Պոլսի Բերա թաղամասում հիմնվում է «*Վարդուհյան*» ընկերությունը, որի Կանոնները, շուրջ երեսուներկու հոդվածով, տպագրվել են 1873 թվականին. «Ընկերութեան նպատակն է՝ «*Դասպիարակութիւն Հայոց օրիորդաց*» (Յօդ.

---

[68] **Պողոսեան, Հ. Եփրեմ Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու,* Վիեննա, հ. Ա, 1957, էջ 494: Ալպոյաճյանը և Թորգոմյանը այս առումով աղբյուրներ չեն նշում:

[69] Նույն տեղում, էջ 493:

[70] «Ժամանակ», Կ. Պոլիս, 1869, թիւ 145:

[71] «Մանզումեի Էֆքյար», 1870, թիւ 1216:

[72] **Պողոսեան, Հ.Ե.Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու,* Վիեննա, հ. Ա, 1957, էջ 521:

Սալմաթոմրուքի սույն ընկերությունն իր տեսակի մեջ առաջինն էր իբրև Սանուհյաց կամ աղջկանց: Դրանից առաջ առկա էին միայն Սանուց ընկերությունները, ինչպես՝ Սամաթիոյ Ս. Սահակյանը, որի գործունեության ժամանակաշրջանը հայտնի չէ: Ըստ կանոնադրության՝ ամեն ոք կարող էր շաբաթական տասը դուրուշ վճարել և դառնալ ընկերության պատվավոր անդամ:

Բ.)»,- գրում է Հայր Եփրեմ Պողոսյանը[73]: 1875 թվականի մարտի 1-ին Բերայում «*Հայ Կաթողիկէ «Վսեմաշուք Տիկնայք եւ Շնորհափայլ Օրիորդք*» հիմնում են «*Աղքատասէր տիկնանց ընկերութիւնը*», որի նպատակն էր՝ «միմիայն Ազգիս աղքատաց թշուառութեան օգնել... աւելի հոգ տանիլ կարօտ աղջիկ տղայոց բարեկրթութեան, ուսմանց եւ արուեստից, որպէս զի իրենք զիրենք ապրեցնելով օր աւուր աղքատութիւն ալ պակսի, որ է նպատակ եւ միմիայն վախճան Աղքատասէր Ընկերութեան»[74]: Պաշտոնապես ընկերությունը ուներ «*Աղքատասէր կանանց Ընկերութիւն*» անվանումը[75]: Ըստ կանոնադրության՝ ընկերությունն ունեցել է ընդհանուր[76] և վարչական ժողովներ, վեց հիմնական և քառասուներկու վարչական կանոններ: 1881 թվականի փետրվարին ընկերությունն ուներ անդամավճարներից գոյացած հազար երկու հարյուր թուրքական լիրա, որն օգտագործել է աղքատներին նպաստներ նշանակելու և «*Համազգեաց Օրիորդաց*» վարժարանի սաներին կրթաթոշակներ տրամադրելու համար: 1881 թվականին, հրատարակված ընկերության ցանկում տեղ են գտել պատվելի գերդաստաններից բազմաթիվ անդամներ: 1880 թվականին Վարդուհյան ընկերությունը «Աղքատասէր»-ին է նվիրում իր դրամագլուխը՝ պայմանով, որ հոգան «հայ աղքատ աղջիկների դաստիարակութիւնը»: «*Աղքատասէր տիկ-*

---

[73] Նույն տեղում, էջ 766:

[74] Նույն տեղում, էջ 766:

[75] Որոշ հրատարակություններում առկա է որպես «*Տիկնայց*» կամ «*Տիկնանց*»:

[76] Ընդհանուր ժողովին կարող էին մասնակցել միայն քսանմեկը լրացած կանայք և օրիորդները: Տղամարդիկ համարվում էին «*Աղքատասէր տիկնանց ընկերության*» պատվավոր անդամներ, մասնակցում էին ընկերության ժողովներին, սակայն քվեարկության իրավունք չունեին: Ընկերությունն ուներ նախագահ, փոխնախագահ, գանձապետ, ատենադպիր: Անդամավճարը կես մեճիտ էր:

Բաժանորդագրությունների հասույթի մեկ չորրորդը բաժանվում էր աղքատներին՝ «մեծապէս նպաստած է Բանկալթիի Ս. Յակոբայ Անկելանոցին կամ՝ 1879 թվականի Զատկի առթիւ Ընկերութիւնը Անկելանոցի կարօտ անձինքներուն կը նուիրէ 452 կտոր զանազան ճերմանկեղէն»: Հասույթի մնացածը տնօրինում էր ընկերությունը (Մասիս, Կ. Պոլիս, 1879, թիւ 2294):

նանց ընկերության» գործունեության թվագրությունը նույնպես անհայտ է: 1879 թվականի Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասի Հռիփսիմյանց վարժարանի սանուհիները ստեղծել են «*Հռիփսիմյան վարժարանի օրիորդաց ընկերություն*»[77]:

1879 թվականի մայիսի մեկին Կ. Պոլսում, Օրթագյուղի Հռիփսիմյան վարժարանի սանուհիների և հովանավորյալ մի քանի կանանց նախաձեռնությամբ, հայ աղջիկների կրթության և դաստիարակության գործին նպաստելու և վարժուհիներ պատրաստելու նպատակով ստեղծվում է «*Դպրոցասեր տիկնանց ընկերությունը*», որը սկզբում կոչվում էր «Դպրոցասեր հայուհյաց ընկերություն»: Ընկերության հիմնադիրներն էին տիկին Նազլը Վահանը, Սրբուհի Տյուսաբը, տիկին Թագուհի Պալտազարյանը, օրիորդ Նուրիկ Սիմոնյանը և Զապել Ասատուրը: Սրբուհի Տյուսաբը և նրա մայրը՝ Նազլը Վահանը, մեծապես աջակցել են նաև կազմակերպչական աշխատանքներին:[78] 1879 թվականի նոյեմբերի հինգին բացվում է «Դպրոցասեր տիկնանց ընկերության» վարժարանը, որը 1880 թ. վերջին ուներ արդեն երեսունհինգ աշակերտուհի: Վարժարանը գործում է մինչ օրս: Ընկերության կողմից բացված «*Դպրոցասեր*» վարժարանի կրթական ծրագիրը նախատեսում էր երկու տարվա նախապատրաստական և հինգ տարվա նախակրթական դասընթաց: 1882 թվականին ընկերությունը Կ. Պոլսում կազմակերպում է

---

[77] **Պողոսեան, Հ.Ե.Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու,* Վիեննա, հ. Ա, 1957, էջ 277:

[78] Ընկերության պատվավոր նախագահն էր Կոնստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը, ապա՝ պատրիարք Հարություն Վեհապետյանը, պատվավոր անդամներն էին՝ Հովհաննես Այվազովսկին, Գրիգոր Չիլինկիրյանը, Ս. Տյուսաբը և ուրիշներ: Ընկերության միջոցները ստեղծվում էին անդամավճարներից, նվիրատվություններից: Ընկերությանն անդամագրվել կարող էին չափահաս կանայք և օրիորդները, եթե ընդհանուր ժողովի անդամների մեծամասնությունը տալիս էր իր համաձայնությունը: Անդամակցության ամսական անդամավճարը մեկ դուրուշն էր: Ընկերությանը կարող էին անդամակցել նաև տղամարդիկ, սակայն նրանք քվերակության իրավունք չունեին: Հիմնադրման պահին ընկերությունն ունեցել է երեսունյոթ, իսկ տարեվերջին՝ 380 անդամ: (**Պողոսեան,** էջ 250):

առաջին հայկական գեղարվեստական ցուցահանդեսը՝ Հովհաննես Այվազովսկու մասնակցությամբ:[79]

1889 թվականի մայիսի երկուսին ընկերությունը տեղափոխվել է Կ. Պոլսի հայաշատ Գում Գափու թաղամաս: Իր գործունեության ընթացքում ընկերությունը մեծ թվով վարժուհիներ է պատրաստել և ուղարկել հայաշատ գավառներ՝ օրիորդաց կրթադաստիարակչական գործը կազմակերպելու: 1892 թվականին ընկերությունը ուներ հարյուր տասը աշակերտուհի: 1895–1896 թվականների հայկական ջարդերի տարիներին ընկերությունը ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը և վերսկսել 1908 թվականին: 1915 թ-ից հետո արգելվել և կրկին վերագործարկվել է 1920-ին: 1922 թվականին «*Դպրոցասեր տիկնանց ընկերությունը*» (վարժարանի հետ) տեղափոխվել է Սալոնիկ, ապա՝ Մարսել և 1928 թվականից հաստատվել Փարիզում, որտեղ կազմվել է նոր վարչություն՝ գրող Անայիսի նախագահությամբ: 1937 թ-ից «*Դպրոցասեր տիկնանց ընկերության*» խնամակալությունը ստանձնել է ՀԲԸՄ-ը: Այսօրինակ ընկերությունների հիմնական նպատակը ոչ միայն բարոյական, կրթական, դաստիարակչական, արհեստագործական-ուսուցողական կողմնորոշումն էր, այլև արդեն գոյություն ունեցող հաստատություններին նյութական օժանդակություն ցուցաբերելը: Կանանց հնարավորությունները չօգտագործելը և չարժևորելը քննադատում էին հատկապես կանայք: Էլպիս Կեսարացյանը իր էսսեներից մե-

[79] Ըստ ականատեսների վկայության՝ Սրբուհի Տյուսաբն այնքան էր տարված ընկերության համար ֆինանսական միջոցներ հայթայթելու հարցերով, որ ցուցահանդեսներից մեկի ժամանակ հաջողում է վաճառել Հովհաննես Այվազովսկու կտավներից և ողջ հասույթը փոխանցում է ընկերության ֆոնդին: Ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով ընկերությունը ժամանակ առ ժամանակ կազմակերպել է նաև բարեգործական պարահանդեսներ: «*Դպրոցասէր Հայուհեաց ընկերությունը*» ուներ նաև կանոնադրություն բաղկացած երեսունութ հոդվածից: Ընկերության բարձրագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովն էր, գլխավոր ատենադպիրը՝ տիկին Աննա Չայանը, Գործադիր ժողովի ղեկավարը՝ օրիորդ Թագուհի Պալտազարյանը:

կում[80] խոսում է այն մասին, թե կինը նույնպես պետք է ազատ լինի, խոսքի իրավունք ունենա, ծառայի ազգի բարօրությանը և առաջադիմությանը. չէ՞ որ կինը նույնպես կարող է օգտակար լինել ազգին: Կինն ինքը պետք է որոշի՝ ուր է ընթանում հասարակությունը, և ինքնուրույն ընտրի՝ ընտանի՞ք, գիտությո՞ւն, գրականությո՞ւն, թե՞ հասարակական-քաղաքական գործունեություն: Ելնելով սույն տրամաբանությունից՝ հայոց կանայք ստեղծում էին նորանոր բարեգործական, կրթական, աղքատախնամ և բարեխնամ, նպաստամատույց ընկերություններ, որոնք առավել նպատակաուղղված էին, կանոնակարգված, թեպետ՝ իրենց գործունեությամբ քիչ էին տարբերվում միմյանցից: Այս ընկերությունների կանոնադրությունները նույնպես քիչ էին տարբերվում միմյանցից, և հնարավոր է, դրանք իրագործելու ճանապարհին և ընկերությունները վարելու ընթացքում նրանք ծանոթացել են միմյանց գործունեությանը, ավելին, գոյություն է ունեցել ընդհանուր դրույթներով որոշակի կանոնակարգ: Նման ենթադրությունները հիմնավորվում են բարեգործականների շրջաբերականների, կանոնագրերի և ընկերությունների շուրջ գրված հոդվածներով: 1879 թվականին Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասի Հռիփսիմյանց վարժարանի սանուհիները ստեղծել են նաև «*Հռիփսիմյան օրիորդաց վարժարան*» ընկերությունը: 1879 թվականի ապրիլի վեցին Բերա թաղամասում մի խումբ հայ օրիորդների հիմնած «*Տիկնանց և Օրիորդաց ընկերությունը*» պետք է ֆինանսապես օժանդակեր «*Կիլիկիան*» ընկերությանը: Հունիսի 22-ին ընկերությունը միավորվում է 1879թ. ապրիլի 11-ին Սկյուտարում Զապել Ասատուրի (Խանջյան)[81] և նրա ութ դասընկերուհինե-

---

[80] **Կսարացյան Է.,** *«Ընկերութեան օգտակարութիւնը»*, «Կիթառ», 1862, թիւ 2, էջ 7–8:

[81] Գաղափարը առաջադրողը օրիորդ Զապել Խանջյանն էր (հետագայում՝ Զապէլ Ասատուր, Սիպիլ), ով այդ ժամանակ դեռևս տասնվեց տարեկան էր:

րի[82] հիմնադրած «*Ազգանուէր Հայուհեաց Ընկերությանը*», որի նպատակը ազգօգուտ և հայանպաստ քաղաքականություն վարելն էր, հայաբնակ գավառներում աղջիկների համար դպրոցներ, վարժարաններ, արհեստանոցներ հիմնելը և նրանց կրթելը[83]: «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան» հիմնադրման առաջին ծանուցումը տպագրվել է Կ. Պոլսի «Փունջ» հանդեսում՝ «Մեծաւ գոհութեամբ կը լսեմք թէ մայրաքաղաքիս մէջ ալ *Հայ Օրիորդաց Ընկերութիւն* մը *կը կազմուի*, դրամ հանգանակելու եւ Արարատեան Ընկերութեան յանձնելու համար որ *գաւառները աղջկանց վարժարաններ ալ հաստատուին*»[84] (ընդգծումը՝ խմբագրի): Նույն հարցին անդրա-

---

[82] Թէոդիկի «Ամենոյն տարեցոյցում» տպագրվել է Սիպիլի մի խոստովանությունը ընկերության ստեղծման նախապատմության շուրջ՝ «<…> կը հրաւիրեմ դպրոցական 8 դասընկերուհիներս, որոնք այն տարին (1876) շրջանաւարտ պիտի ըլլան ինձի հետ Ճեմարանէն: Ու կու գան կը հաւաքուին *մեր Սկիւտարի տանը* մէջ: Ամէնքն ալ կը խանդավառուին, կը յուզուին, կու լան եւ կ'ուխտեն աշխատիլ Հայրենիքին համար: Դպրոցներ պիտի բանանք աղջկանց համար բոլոր հայաբնակ գաւառներու մէջ ու պիտի դաստիարակենք զանոնք նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս: Պիտի սորվեցնենք անոնց մաքրութեան, կարգապահութեան, առողջապահութեան օրէնքները, որպէս զի բարւոքի իրենց ֆիզիքական կացութիւնը. պիտի սորվեցնենք անոնց ձեռարուեստներ, որպեսզի կարենան օգնել ընտանիքին նիւթական պէտքերուն. պիտի սորվեցնենք անոնց կարդալ, գրել, հաշուել, կրօնք, պատմութիւն, որպէս զի ճանչնան իբրեւ մարդ իրենց պարտքերը եւ իրաւունքները եւ իրենց արժանի տեղը գրաւեն մարդկային ընկերութեան մէջ: Այս ուխտը ընող դեռափթիթ աղջիկներն են. - Արտեմիս Տուտեան, Ակուլինէ Լութֆեան, Մառի Չպուքճեան, Սաթենիկ Հաճեան, Տիրուհի Գալֆայեան, Վերգին Խաչատուրեան, Գարիտինէ Վարսավիրեան, Վարդանոյշ Լութֆեան: Եւ ասոնցմով կը կազմուի Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը մօրս եւ հօրաքրոջս հովանաւորութեան ներքեւ 1879 Ապրիլ 11ին»:

[83] Ուշագրավ է ընկերության դիրքորոշումը՝ բոլոր միջոցներով նպաստելու ընտանիքում կնոջ դիրքի, նշանակության և դերակատարման բարձրացմանը, իրենց ներդրումն ու օժանդակությունը (նյութական, բարոյական, սոցիալական, մասնագիտական-արհեստագործական և ոչ միայն) ունենալու կանանց կրթության և դաստիարակության ձևավորման գործում՝ «Եւ ասոնցմով կը կազմուի Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը մօրս եւ հօրաքրոջս հովանաւորութեան ներքեւ 1879 Ապրիլ 11ին: Ընկերութեան Բ, նիստին 150 Տիկիններ եւ Օրիորդներ փութացած էին Պոլսոյ բոլոր արուարձաններէն Օր. Սրբուհի Մելքոնեանի տունը, որ մեր ձեռագործի ուսուցչուհին էր եւ որ իր սրահը մեր տրամադրութեան ներքեւ դրաւ ամբողջ տարի մը»: **Թէոդիկ,** *«Ամէնոյն Տարեցոյցը»,* Կ. Պոլիս, 1911, էջ 243:

[84] «Փունջ», 1879, Կ. Պոլիս, թիւ 1357:

դառնալով հանդեսը երեք օր հետո գրում է՝ «Մեծ ուրախությամբ լսեցինք թէ Արարատեան Ընկերութեան Օժանդակ Ընկերութիւն, Օրիորդաց անունով Ընկերութիւն մը կազմուեր է...: Յոյս ունիմք թէ այս Ընկերութենէն յետոյ պիտի կազմուին նաեւ Հայ Տիկնայց եւ Օրիորդաց ուրիշ Ընկերութիւններ»[85]: Ընկերության առաջին գործադիր ժողովը, կարդալով «Փունջի» սույն գրությունը, մեկնում է իրավիճակը՝ գրություն[86] ուղարկելով խմբագրին՝ «...Արդարեւ Իսկիւտարու մէջ այդ օրինակ կազմութիւն մի կայ... սակայն ոչ միայն օրիորդք՝ այլ եւ տիկնայք իսկ անդամակցած են դմա եւ հետզհետէ Դպրոցասիրաց-Արեւելեանի ու Կիլիկեանի միանգամայն պիտի յանձնէ իւր հաւաքած դրամները, որպէս զի սոյն երեք Ընկերութեանց սահմանին մէջ գտնուած գաւառաց մէջ իգական սեռին համար ալ վարժարաններ հաստատուին: Հետեւաբար, Ընկերութիւնս Օժանդակ միութիւն մի չէ, այլ անկախ Ընկերութիւն մի, որոյ նպատակն է իգական սեռը լուսավորել եւ արդէն իւր ձեռնարկութեան մէջ բաւական խրախուսուած լինելով՝ մի քանի նիստեր կազմած է եւ յառաջիկայ Ուրբաթ եւս նիստ ունի. Գործադիր ժողովոյ Ատենադպիր՝ Զ. Յ. Խանճեան, Ատենապետ՝ Սրբուհի Ալանաքեան, 16 Ապրիլ, 1879, Իսկիւտար»[87]: Ընկերության նպատակ(ներ)ը՝ իգական սեռի կրթությունը և դաստիարակությունը, ամփոփվում են նրա շրջաբերականում (կանոնագրում), որը առաջին կազմումից հետո, մի քանի անգամ թարմացվել և համալրվել է ազգօգուտ դրույթներով,[88] իսկ այնուհետև նյութականացել ազգասեր հայուհիների օգ-

---

[85] Նույն տեղում:

[86] Սույնը «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»ի առաջին պաշտոնական գրությունն էր:

[87] «Փունջ», 1879, Կ. Պոլիս, թիւ 1357:

[88] «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան» առաջին Կանոնագիրը կազմուած էր տասնյոթ կետերից և 1879 թ. մայիսին հրատարակվել է Փունջ (1879, թիւ. 1373), ապա՝ Թէրճ. Էֆքեար (1879, թիւ 567) պարբերականներում: Ընկերությունը ուներ երկու ժողով՝ Ընդհանուր, որը ուներ երեք ատենապետ և երեք ատենադպիր՝ ընտրված մեկ տարով և վերընտրելի, և Գործադիր, որը ուներ մեկ ատենապետ և երկու

նությամբ:[89] 1880 թվականին Ընկերութիւնը հրատարակում է իր «Հիմնական Կանոնագիր»ը, որը կազմուած էր քսանչորս հոդվածներից և «Ներքին Կանոնագիր» երեսուներկու հոդվածներից: Ընկերութեան առաջին Վարչական կազմում Ատենապետը Եղիսաբեթ Սեղբոսյանն էր, Ատենադպիրը՝ Զապէլ Խանջյանը»[90]: Ընկերության Բ նիստի ժամանակ, որը տեղի է ունեցել 1879 թվականի ապրիլի տասներկուսին, և որին ներկա են գտնվել հարյուր հիսուն տիկիններ և օրիորդներ, *կանանց իրավունքները պաշտպանող* «Վասն զի թէ ամեն Հայուհի իւր այդ բարոյական պարտքը ըստ մասին կատարէր, այսօր գաւառաց մէջ պիտի չգնտուէր անհատ մի, որ լուսաւորութենէ զուրկ՝ թշուառութեան եւ բռնութեան տակ հեծէր <…>[91]:

ատենադպիր, երկու գանձապետ և երկու քարտուղար (համարակալ), որոնց ընտրում էր Ընդհանուր ժողովը: Յուրաքանչյուրի ամսական բաժնեգինը մեկ դահեկան էր: Բաժանորդները իրավունք չունեին միջամտելու Ընկերության գործերին: **Պողոսեան, Հ.Ե.Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու,* Վիեննա, հ. Ա, 1957, էջ 339–340:

[89] 1880 թվականին «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»-ը հրապարակում է իր «Հիմնական Կանոնագիրը», որը կազմված էր 24 հոդվածից, և «Ներքին Կանոնագիրը», որը ամփոփում էր 32 հոդված: Տե՛ս «Փունջ», 1879, թիւ 1379: Ընկերությունը ուներ երկու գրասենյակ՝ Սկյուտարում (Սելամիե Քարաղոլի դիմացը, տուն 321) և Ղալաթիայում (Դպրոցասիրաց-Արեւելեանի սենյակը, Նորատունկեան Խան, թիւ 11), իսկ ընդհանուր ժողովի հավաքատեղին Սիլամիէ փողոցում գտնվող Քիւրքճիպաշիի տունն էր: Տե՛ս «Մասիս», 1879, թիւ 1349: Ուշագրավ է, որ Գատրգյուղի «Տիկնանց եւ Օրիորդաց Ընկերութիւնը» ցանկություն է հայտնում միավորվելու «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւն»-ին՝ հետևյալ պայմաններով. «1. Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնը արական սեռին մէջ կազմուած Ընկերութեանց ամէնէն լաւ գործողներուն ձեռամբ պիտի բանայ իւր վարժարանները, ուսմանց ծրագիրներն ու դպրոցին Կանոնագիրն ինքը պատրաստելու պայմանաւ: 2. Ընկերութիւնը իւր առաջին վարժարանը պիտի հաստատէ Հայաստանի մէջ, երբ զայն յառաջ վարելու կարող վիճակի մէջ գտնուի, այն է՝ դպրոցին յատկացեալ գումարին եռապատիկն ունենայ: 3. Ընկերութիւնը երբ բաւական գումար մը ունենայ ի ձեռին, շահու դնէ զայն սեղաննաւորի մը քով կամ պանքա մը: 4. Գատրգիւղի Ընկերութիւնն, որ այսուհետեւ Հայուհեաց Ազգանուէր Ընկերութեան ճիւղը կը կազմէ, պարտի երեք ամիսն մի անգամ իւր հաշիւները ներկայել ընդհ. Ժողովոյս… այսուհետեւ վերոյիշեալ երկու Ընկերութիւնք մի են եւ Հայուհեաց Ազգանուէր Ընկերութիւն անունը կը կրեն»:

[90] «Փունջ», 1879, Կ. Պոլիս, թիւ 1379:

[91] **Պողոսեան, Հ.Ե.Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու,* Վիեննա, հ. Ա, 1957, էջ 343–344:

Իգական սեռը եթէ ուզէ, կրնայ հրաշքներ գործել եւ ասոր փորձը ամեն ուրեք տեսնուած է: Մեք այս Ընկերութիւնը կազմած օրերնիս 12 հայուհի էինք. բայց այսօր ուրախութենէս չեմ կրնար համրել ազգասէր տիկնանց թիւը: Այս Ընկերութիւնը դեռ նոր է, եւ բաժանորդներէ ի զատ 100էն աւելի անդամ ունի. եթէ ամենքնիս միատեղ աշխատիմք, քիչ ժամանակէն բոլոր Հայ իգական սեռը մէջը պիտի արձակեմք»[92] և *բարեգործությամբ ազգին և հայրենիքին օգնելու* գաղափարները բովանդակող ճառ է արտասանել հիմնադիր-ատենադպիր օր. Զապել Խանջյանը՝ բերելով պատմության մեջ իրենց գործերով մարդկության առաջադիմությանը նպաստած և անմահացած կանանց («Յուդիթ, Եսթեր, Ժան տ՛Արք եւ Եղիշէի յիշած փափկասուն տիկիններն Հայոց աշխարհին») օրինակները: Ճառի բնույթը ամփոփում է ժամանակի ընդհանուր բնութագիրը և ընկերության գործառույթները՝ «Մարդկութեան ամէնէն մեծ եւ վսեմ գործն է բարերարել վասն զի անով կրնայ մարդս իւր Արարչին նմանիլ. բարերարել սրտի մէջ ապրիլ է եւ սրտի մէջ ապրիլը անմահութիւն: <...> Իրաւ, դժուար է բարիք գործել բարեգործութիւնը փչալից վարդ մի է, ով որ մերձենայ՝ անոր ձեռքերը կ'արիւնին: Իրաւ, երբ մեք մեր Հայաստանը փրկելու համար ճամբայ կ'ելնեմք, շատ մեծ վտանգներ ունիմք. ահագին անտառներէ պիտի անցնիմք, ուր թշնամի գազաններ իրենց ահարկու մռնչիւններով պիտի ջանան ահաբեկել զմեզ. ծովերէ պիտի անցնիմք ձմեռ ժամանակի մէջ եւ ատելութեան մրրիկներն ու նախանձու ալիքները պիտի ճգնին մեր բարեգործութեան նաւը խորտակել. ձմեռ ժամանակ կ'ըսեմ, վասն զի մեր ազգը տակաւին լուսաւորութեան ձմեռուան մէջ է եւ անշուշտ իւր փոթորիկներով պիտի հարուածէ զմեզ. սակայն մի՛ վախնաք, ձմեռուան կը յաջորդէ գարուն եւ մեր ըստ մեծի մասին տգէտ ժողովուրդը մեր գործոց բարի ըլլալը տեսնելով, փոխանակ

[92] Նույն տեղում, էջ 348:

շանթի, ծաղիկ կթօթափէ մեր գլխուն»[93]: 1879 թվականի մայիսի 30-ին ընկերությունը ուղերձով խնդրում է Ներսէս Արք. Վարժապետեան Ս. Պատրիարքի օրհնությունը:[94]

1879 թվականի հոկտեմբերի քսաներեքին ընկերության հիմնադրման և գործունեության ծրագրի առիթով թերթերը տպագրում են նաև Գէորգ Դ. Սրբազան կաթողիկոսի օրհնության Կոնդակը[95]: 1879 թվականին Կ. Պոլսում Զապէլ Ասատուրի (Սիպիլ) և Արշակուհի Թէոդիկի նախաձեռնությամբ հիմնվում է «*Ազգանուէր հայուհեաց միութիւնը*»[96], որի նպատակն էր կրթել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների հայ օրիորդներին: 1879 թվականի ապրիլի տասնվեցին նորաստեղծ ընկերության ատենադպիր է ընտրվում Զապէլ Ասատուրը, ատենապետ՝ Ս. Ալանաքեանը: 1865 թվականին Հիսարտիպիում ստեղծվել և 1879 թվականին Գում Գափու թաղամաս է տեղափոխվել «Մեզպուրյան» օրիորդաց վարժարանը, որի

---

[93] **Պողոսեան, Հ.Ե.Վ.,** *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու*, Վիեննա, հ. Ա, 1957, էջ 345–346:

[94] Ներսէս Արք. Վարժապետեան Ս. Պատրիարքը հետևյալ պատասխանն է գրում՝ «Առ Նորաբողբոջ Ընկերութիւն Ազգանուէր Հայուհեաց՝ «Ձեր շնորհալի գիր ընկալեալ ուրախ եղէ յոյժ ընդ միաբանութիւնդ ի դրախտ Հայրենեաց վասն բարգաւաճման դաստիարակութեան ի համատիս եւ համարինս Ձեր դստերս Հայաստանի: Իցի՛ թէ օրինակք Ձեր զհետ Ձեր ձգէին զամենիս զՏիկնայս եւ զՕրիորդս ազգիս եւ վաստակ կարեւոր եւ դաշտ քրտանաց եւ ասպարէս առաքինութեան իբրեւ զՁեզ ընտրէին եւ նոքա զկրթութիւն Հայկազն մանկտւոյն: Մաղթեմ ի Տեառնէ օգնական լինել Ձեզ եւ քաջալեր, զՀռիփսիմեանց սրբուհեաց շնորհել Ձեզ բիւրաբեղուն արգասիս, օրհնել զքրտունս Ձեր եւ Դուք ամենեքեան զօրացեալ Տերամբ մը Հոգի շնորհաց ընդ Ձեզ փայլեսջիք իբրեւ զաստեղսն, եղիջիք իբրեւ ծաղիկ անթառամ մեր Հայրենեաց, զդրախտ նախնեաց Ձերոց գեղազեղ զարդարելով ի մխիթարութիւն Հայոց եւ իմ» (1879, մայիս 30, Պեյքօզ: Աղօթարար Ձեր՝ Ն. Ե.)»: «Փունջ», 1879, Կ. Պոլիս, թիւ 1379:

[95] «Մասիս», 1879, Կ. Պոլիս, թիւ 2360:

[96] Ընկերությունը, կանոնադրության համաձայն, հրավիրում էր Ընդհանուր և Գործադիր ժողովներ, իսկ ֆինանսներ հայթայթում էր հիմնականում անդամների նվիրատվություններից: 1880 թ. ընկերությունը Քղիում բացել է առաջին դպրոցը: 1880–1883 թթ. ընկերության ֆինանսական աջակցությամբ հայաշատ գավառներում աղջիկների համար բացվել է չորս վարժարան: 1912թ. գավառներում ուներ քսաներեք դպրոց՝ երկու հազարից ավելի աշակերտուհիներով: Գործել է մինչև 1915 թ. սկիզբը:

նախկին սաները 1884 թվականին հիմնել են «Սանուհեաց ընկերությունը», որը պետք է «Հայաստանի՝ կրթության կարոտ գյուղերում» աղջիկների համար դպրոցներ բացեր[97]: Զբաղվելով հայ աղջիկների կրթության, դաստիարակության, խնամակալության և շատ այլ հարցերով պոլսահայ կանայք միաժամանակ հոգացել են, որ հայուհիները չկորցնեն իրենց ազգային դիմանկարն ու ավանդույթները: Այդ նպատակով 1879 թ. հուլիսի 15-ին Նունյան-Վարդուհյան վարժարանի նախկին աշակերտուհիները հիմնել են «*Պարզասէր հայուհեաց ընկերութիւնը*»[98]: 1886 թ. ապրիլի 21-ին Բերայում հիմնվել է «*Տիկնանց խնամակալություն*»[99] ընկերությունը, որը զբաղվում էր թաղամասի օրիորդաց վարժարանների հովանավորչությամբ:

Եզրակացություն

19-րդ դարի երկրորդ կեսին արևմուտքից ներթափանցող նորահայտ գաղափարի՝ ֆեմինիզմի առաջին ալիքի սկզբնավորմանն ու արտահայտությանը զուգահեռ, արևմտահայ կանայք, եվրոպացի և հույն կանանց օրինակով, ստեղծում էին հասարակական ընկերություններ և միություններ, որոնց միջոցով և իրականացնում էին իրենց գործունեությունը: Հայ կանանց հասարակական և քաղաքական դերի ակտիվացումը սկսվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, որին էապես նպաստում էին հայաշատ քաղաքներում (հատկապես՝ Կ. Պոլսում) կրթական բարեգործական միությունների և օրիորդաց դպրոցների հիմնումը, որտեղ հայ օրիորդները կրթվում

[97] «Նոր-Դար», 1884, Թիֆլիս, թիվ 31:

[98] «Մասիս», Կ. Պոլիս, 1879, թիվ 2399:

[99] Ընկերությունն ուներ «խնամակալ մարմին»՝ հետևյալ անդամներով՝ Տիկին Աննա Մայր Էսայանց, Տիկին Զ. Սարգիս Համամճյան, Տիկին Մաննիկ Տաւսուտեան: 1888 թ. ապրիլի 6-ից ընկերությունը զբաղվում էր նաև թաղամասի աղքատների խնամքով, հոգացել նրանց սննդի և հագուստի, բժշկության ու դեղերի, որբերին ու այրիներին աշխատանքով ապահովելու ևն հարցերով: Ընդլայնելով գործունեությունը՝ ընկերությունը աշխատանոց է հիմնում Բերայի Նարեկյան վարժարանում:

և դաստիարակվում էին: Դպրոցները և վարժարանները հիմնվում և գործում էին կանանց ազգօգուտ գործունեության արդյունքում, և դրանց շրջանավարտներից շատերը հետագայում դառնում էին առաջադիմական գաղափարներ տարածողները: Այս և նման իրողությունները մեծապես նպաստում էին սոցիումում կանանց իրավունքների ձեռքբերման, ազատագրության, կրթության և դաստիարակության հիմնախնդիրները տեսնելուն և լուծելուն: Օսմանյան բռնապետության մեջ ապրող հայ կինը աստիճանաբար ազատագրվում էր փակ-ավանդականության, հայրիշխանության, կենցաղային գերության, հասարակության լիիրավ անդամ չլինելու, խոսքի իրավունք չունենալու համր ու մութ կարգավիճակներից և ներգրավվում հասարակության տարբեր շերտեր:

РОЛЬ АРМЯНСКИХ НАЦИОНАЛЬНЫХ, ОБРАЗОВАТЕЛЬНЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ И ГИМНАЗИЙ В ПРОЦЕССЕ ЭМАНСИПАЦИИ АРМЯНСКИХ ЖЕНЩИН ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА В КОНСТАНТИНОПЛЕ

АМБАРЦУМЯН Н.

Резюме

Ключевые слова: Константинополь, благотворительные организации, образование, колледж, Османская империя.

Цель исследования – проанализировать роль армянских национальных гуманитарно-попечительских организаций и гимназий в процессе эмансипации армянских женщин во второй половине 19 века в Константинополе. В данной статье рассматри-

ваются организации в зависимости от их цели (организация образовательного и воспитательного процесса для армянских женщин и девушек, открытие женских гимназий в городах Османской империи, населенных преимущественно армянами, обеспечение действующих гимназий одеждой, суточными пайками, письменными принадлежностями и финансовыми средствами) и *идеологической основы* (расширение гуманитарной и патриотической деятельности). Для достижения поставленной цели нами были применены следующие методы: *феноменологический* и *сравнительно-исторический*. Исследование актуально не только с точки зрения систематизации благотворительных организаций и гимназий, но и с позиции изучения «женского вопроса» в арменоведении.

THE ROLE OF ARMENIAN NATIONAL, EDUCATIONAL AND CHARITIBLE SOCIETIES AND COLLEGES IN THE PROCESS OF WOMEN'S EMANCIPATION IN THE SECOND HALF OF THE 19TH CENTUARY IN CONSTANTINOPLE

HAMBARDZUMYAN N.

Summary

Keywords: Constantinople, charitable organizations, education, college, Ottoman Empire.

The aim of the study is to examine the role of Armenian national, guardianship, and humanitarian societies and colleges established in Constantinople in the process of women's emancipation in the second

half of the 19th century. The societies were viewed according to the *purpose* (providing education and upbringing to Armenian women and girls, opening women's colleges in the Armenian-populated cities of the Ottoman Empire, providing the existing colleges with clothes, daily allowance, stationery, and financial means), and *ideological basis* (carrying out humanitarian and nationally beneficial activities). *Phenomenological* and *historical-comparative* methods have been used. The study is important and relevant not only in terms of systematizing charities and colleges, but also in terms of examining women's issues in Armenology.